№ 107 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 15 — 1899 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 15 № 107

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառի 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՍԵՌԻՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր հաստատութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դրամական տադնապը Պարսկաստանում:

ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

«Մշակի» վերջին հեռագիրները մեզ տեղեկացնում են, որ Բարձրագոյն հրամանով սահմանվում են Ռուսաստանում նոր պաշտօններ, որոնց գործը պէտք է լինի նպաստել կառավարութեանը զարգացնելու գիւղատնտեսութիւնը երկրի մէջ: Իւրաքանչիւր նահանգի մէջ պէտք է նշանակվի երկրագործութեան մինիստրութեան կողմից մի լիազօր, որի ղեկավարութեան տակ պէտք է գտնվեն մասնագէտներ: Լիազօրը իր մասնագէտներով պէտք է վերահասու լինի նահանգի գիւղատնտեսական կարիքներին, մշակի և կազմի գիւղատնտեսական բարելաւումների ծրագիրներ, մոցնի նահանգում գործադրվող գիւղատնտեսական փորձերի և միջոցների մէջ միութիւն և համակարգութիւն և վերջապէս, ներգործի նահանգի գիւղատնտեսութեան վրա անմիջական ազդեցութեամբ:

Այդ պաշտօնների հաստատութիւնը մի իրական պահանջ էր, որի կարևորութիւնը վաղուց զգացվում էր, բայց միայն այսօր է նա ստանում իր իրագործութիւնը: Արդարև, կառավարութիւնը մինչև այժմ չունէր այնպիսի գործակալներ և այնպիսի հաստատութիւններ, որոնք, ցրված լինելով կայսրութեան զանազան մասերում և վերահասու լինելով տեղական գիւղատնտեսական կարիքներին մի կողմից՝ կանոնաւոր կերպով տեղեկացնէին կառավարութեան այդ կարիքների մասին, իսկ միւս կողմից՝ կարողութիւն տային կառավարութեանը օգնել ազգաբնակութեանը զանազան միջոցներով: Կառավարութիւնը իր ձեռքի տակ չունէր տեղական օրգաններ, չունէր մասնագիտական պատրաստութեամբ գործակալներ, չունէր մի խօսքով գործադիր մարմիններ, որոնք գտնվէին նրա անմիջական կարգադրութեան ներքոյ և կատարէին նրա հրահանգները:

Այդ պաշտօնները նախ մոցնվում են այն նահանգներում, որտեղ հաստատված են զեմստվոյի հիմնարկութիւններ: Մշակվում է ծրագիր և այն նահանգների համար, որտեղ տեղական ինքնավարութեան հիմնարկութիւններ դեռ գոյութիւն չունեն: Մի քանի տարուց յետոյ գիւղատնտեսական կազմակերպութեան ցանցը պէտք է տարածվի կայսրութեան մեծ մասի մէջ և այդպիսով գիւղատնտեսական ղեկավարութեան գործը պէտք է ստանայ համակարգութիւն:

Հաստատված նոր պաշտօնների և նոր գործի աջողութիւնը կախված է երկու հիմնական պայմաններից, որոնց վրա անհրաժեշտ է մանաւանդ լինել գործի սկզբում: Դրանցից մէկն է պաշտօնեաների ընտրութիւնը, իսկ միւսը դրամական օգնութիւնը: Գիւղատնտեսական պաշտօնների պէտք է հրաւիրվեն այնպիսի անձինք, որոնք իրանց մասնագիտական պատրաստութեամբ կամ գործնական հմտութեամբ իսկապէս գիտեն գիւղատնտեսութիւնը և կարող են հեղինակաւոր կերպով ղեկավարել իրանց գործը:

Ինչ վերաբերում է դրամական միջոցների խնդրին, դա ժամանակի խնդիր է: Շուտով երբ նոր պաշտօնները կը հաստատվեն և գործունէութեան մշակված ծրագիրները ցոյց կը տան մի շարք անհրաժեշտ գործառնութիւնների կարևորութիւնը, այն ժամանակ պետական գանձարանը անկասկած կը հայթայթի այն միջոցները, որոնք հարկաւոր են օգտաւէտ և նպատակայարմար գործի համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Ի՞նչ է հայրենասիրութիւնը: Ահա մի մշընջենաւոր պարզ և մի և նոյն ժամանակ մշտապէս դժուար հասկանալի հարց: Պարզ է ամենքի և ամեն մէկի համար, որ հայրենասիրութիւնը մի սրբազան, վեհ զգացմունք է և նա ծնվում է բնականաբար. նա բարիք է, իդէալ է: Դեռ ռուսաց նշանաւոր կրիտիկոս Դոբրոլիւբովը մօտ քառասուն տարի առաջ բացատրեց այդ զգացմունքը վերին աստիճանի գեղեցիկ կերպով: Մարդու մէջ ամենից առաջ զարգանում է սէր դէպի իրան շրջապատողները, դէպի մայրենի շրջանը: Այնուհետև այդ մասնաւոր, տեղական սէրը զարգանում է նրա մէջ, գրկում է աւելի մեծ տարածութիւններ. նա սիրում է իր հայրենիքը, այսինքն ամեն տեսակ բարոյութիւն և առաջադիմութիւն է ցանկանում նրան, աշխատում է, որ իր գործունէութեամբ իր սիրած գաղափարները մանեն հայրենի աշխարհը: Բայց այդ չէ կարող եսամոլ լինել, քանի որ բարոյութիւն ասած բանը կարող է գլուխ գալ ոչ թէ առանձին անհատների, առանձին խումբ մարդկանց համար, այլ մարդկութեան ընդհանուր ջանքերով: Ժողովրդական այն առածը, որ ասում է թէ հարևանիդ հարիւր բարիք ցանկացիր, որպէս զի ինքդ մի հատ բարիք ստանաս, պարունակում է իր մէջ այն բարոյական վեհ սկզբունքը, որ հնարաւորութիւն է տալիս մարդկանց մի մեծ ընտանիք կազմել, ապրել միասին, շփվել միմեանց հետ: Եւ այսպէս ազնիւ, բնական, անաղարտ հայրենասիրութիւնը ենթադրում է բարիք իր սեփական երկրի համար, բայց մի այնպիսի բարիք, որ ցանկալի է բոլոր ազգերին, ամբողջ աշխարհին: Այս տեսակէտից Ֆրանսիացին կարող է և պարտաւոր է ամենաջերմ կերպով սիրել իր հայրենիքը և մի և նոյն ժամանակ բնական, գեղեցիկ համարել և այն սէրը, որ տածում է անգլիացին կամ ռուսը դէպի իր հայրենիքը: Սակայն մարդկութեան մէջ շատ գեղեցիկ իդէալներ և զգացմունքներ աղճատված են արհեստական կերպով, ընդունել են հիւանդոտ դրութիւն: Այս աղճատված, հիւանդոտ կերպարանքի մէջ գաղափարը արդէն դադարում է լոյս և կենդանութիւն լինելուց և դառնում է մի մեծ չարիք, որ տանջում է մարդկանց: Այսպէս է և հայրենասիրութիւնը. նրա այլանդակված, անբնական և զզուելի կերպարանքը արդէն ունի ուրիշ անուն—չովինիզմ: Մաքուր, իդէալական հայրենասիրութեան և չովինիզմի մէջ նոյնքան նմանութիւն կայ, որքան առողջ ու գեղեցիկ մարդու և հարիւր ու մի արատներից մաշված, այլանդակված մարդու մէջ: Այս մի և նոյն միտքը աշխատում է ապացուցանել պ. Ալէքսանդր Նովիկով մի գեղեցիկ յօդուածի մէջ, որ տպված է—մի զարմանաք—«Новое Время» լրագրի էջերում:

Ի՞նչպէս ես չը սիրեմ այն երկիրը, ուր ծնվել եմ, անց եմ կացրել իմ մանկութիւնը, ուր խօսում են իմ լեզուով, մտածում են ինձ պէս, որի շահերը իմ շահերն են, որի հետ ես կապված եմ օրօրոցից ձեռք բերած սովորութիւններով:

Սա բնական, արդար զգացմունքն է, սա մարդու հետ է ծնվում և ոչ սովորութեան, ոչ կրթութեան արդիւնք է: Տարէք վայրենի էսկիմոսին լիմոնների, նարինջների հայրենիքը և նա այնտեղ հալումաշ անող կարօտով կը յիշէ յաւիտենական ձիւներով պատած իր երկիրը: Բայց ինչպէս է աղճատվում այս սրբազան զգացմունքը:

Ոչ մի զգացմունքի մասին այնքան շատ չեն բղաւում, ինչպէս դէպի հայրենիքն ունեցած սիրոյ մասին: Համարեա ամեն մի գրող բոլոր երկիրներում նախ և առաջ աշխատում է համոզել ընթերցողին, որ այն ամենը, ինչ գրում է ինքը, ուրիշ բանի խեղաղութիւն չէ, չէ բայց միայն ամենամաքուր հայրենասիրութեան: Ինչի մասին էլ գրէ, նա կաւելացնի որ ամեն մի մարդ, որ սիրում է իր հայրենիքը, պիտի հաճայն լինի նրա, այդ գրողի հետ: Իսկ երբ կայ հակառակ կարծիքի տէր, նրան իսկոյն մեղադրում է դաւաճանութեան մէջ:

Եւ ահա առաջանում է զգացմունքի բրոնաբարում, անհամբերողութիւն: Իրլանդացին ատում է անգլիացուն, իսկ անգլիացին բոլորովին նկատի չունի իրլանդացու զգացմունքը և շարունակում է իր հասկացած հայրենասիրութեան տեսակէտից վարվել նրա հետ: Ազգերի պատմութիւնը լի է այս տեսակ փաստերով. Գերմանիան պարծենում է իր հայրենասիրութեամբ և այդ զգացմունքին յագուրդ տալու համար Զինաստանից պատառներ է խլում, մոռանալով որ Զինաստանն էլ երկիր է, որ նա էլ ունի հայրենասիրութիւն: Հայրենասիրութեան և չովինիզմի մէջ եղած տարբերութիւնը հեղինակը այսպէս է ձևակերպում.

> Հայրենասիրութիւնը դէպի հայրենիքն ունեցած սիրոյ բնական և խելացի զգացմունք է, իսկ չովինիզմը անխելացի զգացմունք է, ուստի և բնական չէ, այլ ստացական: Հայրենասիրութիւնը որոնում է ճշմարտութիւն, չէ աշխատում ոչ իրան խաբել, ոչ մարդկանց. չովինիզմը սկսում է ինքնախաբէութիւնից և վերջացնում է ուրիշներին խաբելով:

Վերցնենք կրօնը: Մի ժամանակ մաքուր կրօն էր համարվում բուն նախապաշարմունքը, ֆանատիկոսութիւնը, որ տանում էր մարդկանց դէպի ինկվիզիցիա, հալածանքներ, բռնութիւններ:

Բայց եթէ պետութիւնների համար հնարաւոր եղաւ դէն դցել պետական պաշտօնական ֆանատիկոսութեան լուծը, ինչու մարդկութիւնը, կուլտուրայի զարգացման հետ, չը պիտի ձգտէ հասկանալ հայրենասիրութիւնը մաքուր կերպով, առանց չովինիզմի խառնուրդի: Քրիստոնէութիւնը մեզ սովորեցնում է թէ չը պիտի լինի ոչ հելլէն, և ոչ հրէայ և մենք ամենքս պիտի ձգտենք դէպի քրիստոնէական եղբայրութեան սէրը: Բայց այս իդէալը հեռու է ժամանակակից զգացմունքներից և հասկացողութիւններից, թէև չէ հակասում խելացի հայրենասիրութեան, ինչպէս հայրենասիրութիւնը չէ հակասում աւելի էլ մօտիկ զգացմունքին—դէպի ընտանիքն ունեցած սէրին:

Այսքան գեղեցիկ մտքերը պէտք էր որ շատ տարածվէին մարդկութեան մէջ: Առիթը կայ և դա—Հաագայի կոնֆերէնցիան է: Միայն այն նարարութեամբ գնացել էր Զինաստան՝ բրիտանական վաճառականութեան վիճակն ուսումնասիրելու համար: Ցարգելի լորդը հրատարակել է իր ուսումնասիրութեան հետևանքը. նա մեծ ցաւով յայտնում է, որ բրիտանական ազդեցութիւնը և առևտրական հմտաւը չոշափելի կերպով ընկել է և այդ անկման պատճառն այն է, որ անգլիացիները ի նկատի ունեն միայն իրանց սեփական շահը: «Մինչև այժմ—ասում է լորդը—մեր քաղաքականութիւնը կայանում էր նրանում, որ աշակցութիւն էինք ցոյց տալիս տկար ազգերին, բայց մենք օգուտ քաղեցինք Զինաստանի կառավարութեան և ժողովրդի թուլութիւնից մեր սեպական շահերն առաջ մղելու նպատակով և դրա հետևանքն այն եղաւ, որ Զինաստանը սկսեց կասկածով վերաբերվել մեզ:»

Պարսկաստանում ևս անգլիական ձեռնարկութիւնների անաջողութեան պատճառը պէտք է նոյնպէս որոնել լորդ Բերեսֆօրդի ակնարկած հանգամանքի մէջ: Լօնդոնում, անգլիական կառավարութեան աջակցութեամբ, կազմվեց մի մեծ ակցիոներական ընկերութիւն Պարսկաստանում մի պետական բանկ հիմնելու համար: Ընկերութիւնը, առատ փեշքէշների օգնութեամբ, մանաւանդ ապագայում մեծամեծ յոյսեր խոստանալով՝ կարողացաւ համոզել Շահին և Սադրազամին բանկը «պետական» դարձնել, այն է թոյլ տալ թղթադրամ թումանոցներ հանել, երաշխաւորելով գանձարանի կողմից նրանց արժէքը ոսկով: Բանկը կոչվեց «Բանկը Շահնշահի Իրան»—«Կայսերական բանկ Իրանի». մի, տասն, քսան և հինգ թումանոց գեղեցիկ և Նասրէդդին Շահի պատկերով զարդարված թղթադրամներ շրջանառութեան հանվեցին. ժողովուրդը, մանաւանդ առևտրական դասակարգը մեծ համակրութեամբ վերաբերվեց բանկին և այդ պատճառով նա շուտով իր ճիւղերը բացեց Թաւրիզում, Համադանում, Սպահանում, Ռաշտում և այլ վաճառաշահ կենտրոններում: Բանկի ակցիաները սկսեցին բարձրանալ Անգլիայում և անգլիական պարլամենտում ներքողներ կարդացվեցին բանկի հասցէին: Սակայն այդ աջողութիւնը միայն մի քանի տարի տեսաց. շուտով յայտնվեց, որ բանկը մաղաչափ անգամ չէ մտածում Պարսկաստանի առևտրական յարաբերութիւնների և ֆինանսական աղբիւրների բարգաւաճման համար, ինչպէս խոստացել էր. նա բերել էր տալիս Եւրոպայից մեծ քանակութեամբ արծաթ, իսկ երկրում գտնված բոլոր ոսկին հաւաքելով, ուղարկում էր Անգլիա:

Եւ այդպէս, մի կողմից Հաջի Մամադ Հասանը, միւս կողմից անգլիական Շահնշահի բանկը, կարծես մրցելով միմեանց հետ, հաւաքում էին Պարսկաստանի ոսկին: Բանկը կոչվեց «Բանկը Շահնշահի Իրան»—«Կայսերական բանկ Իրանի». մի, տասն, քսան և հինգ թումանոց գեղեցիկ և Նասրէդդին Շահի պատկերով զարդարված թղթադրամներ շրջանառութեան հանվեցին. ժողովուրդը, մանաւանդ առևտրական դասակարգը մեծ համակրութեամբ վերաբերվեց բանկին և այդ պատճառով նա շուտով իր ճիւղերը բացեց Թաւրիզում, Համադանում, Սպահանում, Ռաշտում և այլ վաճառաշահ կենտրոններում: Բանկի ակցիաները սկսեցին բարձրանալ Անգլիայում և անգլիական պարլամենտում ներքողներ կարդացվեցին բանկի հասցէին: Սակայն այդ աջողութիւնը միայն մի քանի տարի տեսաց. շուտով յայտնվեց, որ բանկը մաղաչափ անգամ չէ մտածում Պարսկաստանի առևտրական յարաբերութիւնների և ֆինանսական աղբիւրների բարգաւաճման համար, ինչպէս խոստացել էր. նա բերել էր տալիս Եւրոպայից մեծ քանակութեամբ արծաթ, իսկ երկրում գտնված բոլոր ոսկին հաւաքելով, ուղարկում էր Անգլիա:

Եւ այդպէս, մի կողմից Հաջի Մամադ Հասանը, միւս կողմից անգլիական Շահնշահի բանկը, կարծես մրցելով միմեանց հետ, հաւաքում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՏԱԴՆԱՊԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

III

Տասն տարի առաջ անգլիացիները մեծ ջանքեր գործ դրեցին Պարսկաստանում մի մեծ բանկ հիմնելու: Այդ այն ժամանակն էր, երբ իր դիւանագիտութեամբ և ճարպիկութեամբ յայտնի սըր Դրըմմոնդ Վոլֆը անգլիական դեսպան էր Թէհրանում և անգլիական ազդեցութիւնը Պարսկաստանի վրա իր գագաթնակէտին էր հասել, երբ անգլիացիները մէկ-մէկու ետևից ձեռք բերեցին Ֆարուն դետի նաւարկութեան, ծիախոտի բէժիի մենաշնորհները: Մի բանկ ևս,—պնդում էին անգլիացիները—և Պարսկաստանը շատ կարճ ժամանակում անգին նիւթական առաջադիմութիւն կանի: Ֆարուն դետի նաւարկութիւնը, որ պէտք է միացնէր Եփրատը Պարսից ծոցի հետ, ծխախոտի բէժին և մի մեծ բանկ իր ճիւղերով զանազան քաղաքներում—այս երեք ձեռնարկութիւնները պէտք է ամենից զարկ տային երկրի վաճառականութեան և տնտեսական բարգաւաճման: Պարսկաստանը պէտք է վերածվէր և անգլիական ազդեցութիւնը ու տնտեսական տիրապետութիւնը պէտք է մշընջենաւորապէս հաստատվէր: Սակայն 10—15 տարվայ ընթացքում երկրի վիճակը միանգամայն կերպարանափոխված ենք տեսնում. Ֆարուն գետի նաւարկութիւնը ամենախղճալի դրութեան մէջ, բէժին, հազիւ սկսված, տապալվեց ժողովրդի և հոգևորականութեան դիմադրութեան պատճառով. իսկ այնքան մեծադղորդ կերպով բացված բանկը այսօր չը գիտէ ինչպէս ծածկէ իր վնասները, դէֆիցիտները և իր ակցիաների անկման առաջն առնէ:

Անգլիական ազդեցութիւնը ջուրն ընկաւ և գլուխ բարձրացրեց ռուսական ազդեցութիւնը. այդ ազդեցութիւնը օրէցօր այնքան աճում է, որ արդէն անգլիական մամուլը հարց է բարձրացրել, թէ արդեօք ժամանակ չէ համաձայնութիւն կայացնել Ռուսաստանի հետ և որոշել ազդեցութիւնների շրջանը Պարսկաստանում, կամ այլ խօսքով, ժամանակ չէ՞ սկիզբն դնել Պարսկաստանի բաժանման և թոյլ չը տալ, որ ապագայում նա ամբողջովին ընկնի Ռուսաստանի տիրապետութեան տակ: Բայց ինչ եղաւ անգլիական ձեռնարկութիւնների անաջողութեան պատճառը. այդ հարցին թողնենք որ պատասխանի անգլիական պետական գործիչներից մէկը—լորդ Զարլզ Բերեսֆօրդ, որը, Անգլիայի առևտրական միացեալ պալատների յանձնարարութեամբ գնացել էր Զինաստան՝ բրիտանական վաճառականութեան վիճակն ուսումնասիրելու համար: Ցարգելի լորդը հրատարակել է իր ուսումնասիրութեան հետևանքը. նա մեծ ցաւով յայտնում է, որ բրիտանական ազդեցութիւնը և առևտրական հմտաւը չոշափելի կերպով ընկել է և այդ անկման պատճառն այն է, որ անգլիացիները ի նկատի ունեն միայն իրանց սեփական շահը: «Մինչև այժմ—ասում է լորդը—մեր քաղաքականութիւնը կայանում էր նրանում, որ աջակցութիւն էինք ցոյց տալիս տկար ազգերին, բայց մենք օգուտ քաղեցինք Զինաստանի կառավարութեան և ժողովրդի թուլութիւնից մեր սեպական շահերն առաջ մղելու նպատակով և դրա հետևանքն այն եղաւ, որ Զինաստանը սկսեց կասկածով վերաբերվել մեզ:»

Պարսկաստանում ևս անգլիական ձեռնարկութիւնների անաջողութեան պատճառը պէտք է նոյնպէս որոնել լորդ Բերեսֆօրդի ակնարկած հանգամանքի մէջ: Լօնդոնում, անգլիական կառավարութեան աջակցութեամբ, կազմվեց մի մեծ ակցիոներական ընկերութիւն Պարսկաստանում մի պետական բանկ հիմնելու համար: Ընկերութիւնը, առատ փեշքէշների օգնութեամբ, մանաւանդ ապագայում մեծամեծ յոյսեր խոստանալով՝ կարողացաւ համոզել Շահին և Սադրազամին բանկը «պետական» դարձնել, այն է թոյլ տալ թղթադրամ թումանոցներ հանել, երաշխաւորելով գանձարանի կողմից նրանց արժէքը ոսկով: Բանկը կոչվեց «Բանկը Շահնշահի Իրան»—«Կայսերական բանկ Իրանի». մի, տասն, քսան և հինգ թումանոց գեղեցիկ և Նասրէդդին Շահի պատկերով զարդարված թղթադրամներ շրջանառութեան հանվեցին. ժողովուրդը, մանաւանդ առևտրական դասակարգը մեծ համակրութեամբ վերաբերվեց բանկին և այդ պատճառով նա շուտով իր ճիւղերը բացեց Թաւրիզում, Համադանում, Սպահանում, Ռաշտում և այլ վաճառաշահ կենտրոններում: Բանկի ակցիաները սկսեցին բարձրանալ Անգլիայում և անգլիական պարլամենտում ներքողներ կարդացվեցին բանկի հասցէին: Սակայն այդ աջողութիւնը միայն մի քանի տարի տեսաց. շուտով յայտնվեց, որ բանկը մաղաչափ անգամ չէ մտածում Պարսկաստանի առևտրական յարաբերութիւնների և ֆինանսական աղբիւրների բարգաւաճման համար, ինչպէս խոստացել էր. նա բերել էր տալիս Եւրոպայից մեծ քանակութեամբ արծաթ, իսկ երկրում գտնված բոլոր ոսկին հաւաքելով, ուղարկում էր Անգլիա:

Եւ այդպէս, մի կողմից Հաջի Մամադ Հասանը, միւս կողմից անգլիական Շահնշահի բանկը, կարծես մրցելով միմեանց հետ, հաւաքում

հանդամանքը, որ այսպիսի յօդուած լոյս է տեսնում մի չօվինիստ, հակամարդկային մտքերի ժոլեռանդ երկրպագու լրագրի մէջ, ինքն ըստ ինքեան մի երևոյթ է, թէև պէտք է այն էլ ասել, որ «Новое Время»-ն, տեղ տալով պ. Նովիկովի գրութեան, մի և նոյն համարում մի առաջնորդողով հերքում է նրան և հերքում է, հիմնվելով այն ողորմելի մտքի վրա, թէ չովինիզմն էլ աշխարհի կարգ է։ Կարծես աշխարհի յիմար կարգերը երբէք չը պիտի վերանան և կարծես ժամուլը չը պիտի նպաստէ այդ վերացման, քարոզելով արդար և աշխարհաշէն կարգեր, մաքրելով իդէալները ցեխից և ապականութիւնից...

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ղուբա, յունիսի 8-ին

«Մշակի» № 97-ի մէջ պ. Առաքել Ծատուրովի կառավարիչ՝ պ. Ա. Աթանասեանի տված հերքման վերաբերմամբ հետևեալ բացատրութիւնն ենք տալիս։ Աւազակային խմբի մուտք գործելը կալուածատէրեր՝ պ.պ. Ն. Ա. Սարուխովի և Ա. Ծատուրովի կալուածքներում, մեզ հաղորդեց մեր տանը՝ եղբարք Միրզոեանցների կալուածքների կապալառու Արտէմ Սապատով, մայիսի 15-ին։ Նա է մեզ մոլորեցրել. հաւատալով նրա խօսքերին, ինչպէս մի ծանօթ մարդու, մենք հաւատալ չուզեցանք սկզբում, բայց և չէինք կարծում, որ որ և է դիտաւորութեամբ նա կամենար սուտ լուրեր հաղորդել։

Եւ իսկապէս աւազակները, ինչպէս հիմա իմացանք ճշգրիտ աղբիւրներից, թէև յայտնվել են յիշեալ կալուածքներում, բայց փողեր չեն ստացել կալուածատէրերի կառավարիչներից։

Շտապելով ուղղել մեր թղթակցութեան այդ մասը, պարտք ենք համարում յայտնել, որ նրա մէջ հաղորդած միւս տեղեկութիւնները անարատ են և մենք ձեռք էինք բերել դրանց թէ վարչական անձերից, թէ վնասվածների ազգականներից և թէ մեր ծանօթներից...

Մ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսը այցելեց Սևանի և Հաղարծնի վանքերը և ապա Մեծ-Ղարաքլիսայով վերադարձաւ Էջմիածին։

—

Առաջիկայ օգոստոս ամսին Կիեվ քաղաքում տեղի կունենայ հնագիտական ժողով, որ թւով տասնմէկերորդն է։ Ժողովի դումարվելու ժամանակ կը բացվի հնագիտական ցուցահանդէս, որտեղ պէտք է ուղարկի իր հարուստ հաւաքածուները Մոսկվայի հնագիտական ընկերութիւնը, օգտվելով այն արտօնութիւններից, որ արել է երկաթուղային վարչութիւնը ապրանքների համար՝ վերցնելով միայն 50%։

—

Ստացանք Մ. Զանաշվիլիի կազմած «Каталогъ церковнаго музея грузинскаго экзархата», որ պարունակում է իր մէջ վրաց էկզարխատի եկեղեցական թանգարանում գտնվող ձեռագիրների, պատկերների, դրամների և ուրիշ հնութիւնների ցուցակը։ Ներկայ հրատարակութիւնը կազմում է ցուցակների № 2, բաղկացած է միջին դիրքով 17 երեսից և արժէ 10 կոպէկ։

—

Պետերբուրգում հրատարակվող «Вѣстникъ Иностранной литературы» և «Собраніе сочиненій избранныхъ иностранныхъ писателей» հանդէսների խմբագրութիւնը կազմել է մի մեծ ակցիոներական հրատարակչական ընկերութիւն 250,000 ռուբլի դրամագլխով, բաժանված 250 ակցիայի, հազարական ռուբլի արժողութեամբ։ Ընկերութիւնը կունենայ սեփական տպարան, վիմագրատուն, կազմարան և զանազան նկարչական, գծագրական և ցինկոգրաֆիայի արհեստանոցներ։ Ընկերութիւնը ստացել է Բարձրագոյն հաստատութիւն։

—

Գիւղատնտեսական վիճակագրութեան ծրագիր պատրաստելու համար կազմվել է մի յանձնաժողով, որին մասնակցում են Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան, օթերևոյթաբանական կայարանի և վրաց ազնուական հողային բանկի ներկայացուցիչներ։ Յանձնաժողովի անդամներն են՝ իշխան Ի. Անդրոնիկով, Ա. Քալանթար, Ս. Դանդուրով, Ի. Ֆիգուրովսկի և Գ. Ժուրուլի։ Յանձնաժողովը, ծրագիրը մշակելուց յետոյ, պէտք է ներկայացնի կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհրդին, որը վերջնական որոշում կայացնելու համար, կը հրաւիրի իր նիստին հողային բանկի ներկայացուցիչներին։ Ծրագիրը վերջնականապէս մշակված կը լինի առաջիկայ աշնան։

—

Մոսկվայի քաղաքային դուման որոշել է թոյլ տալ մասնաւոր մի ձեռնարկողին, Պոպովին, շինելու տելեֆոնով խօսելու համար կիոսկներ քաղաքի զանազան մասերում։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Միաբանների համար այս տարի շինվում է առանձին բաղանիք, ուր պէտք է յաճախեն միայն միաբանները և ճեմարանի աշակերտները։ Թէ ում խորհրդով ու ծրագրով է գցված այս շէնքը, մեզ յայտնի չէ, սակայն շինութեան տեղը շատ անյարմար է և նոյն իսկ Վնասակար առողջապահական տեսակէտից։ Նոր բաղանիքի շինութիւնը գտնվում է միաբանների համար հանդուցեալ Երեմիա արքեպիսկոպոսի շինած փառաւոր շինութեան և տպարանին շատ մօտ, այնպէս որ այսուհետև միաբանները և տպարանի ծառայողները ստիպված պէտք է լինեն թարմ օդի տեղ ծծել բաղանիքի փչացած օդը և Վնասակար ծուխը, էլ չենք խօսում բաղանիքի ուրիշ անմաքրութիւնների մասին։ Մենք կարծում ենք, որ բաղանիքի միակ նպատակը պէտք է լինի ազեղացնել Երեմիա սրբազանի փառաւոր շէնքը, քանի որ տասնեակ յարմարաւոր խուլ անկիւնները թողած, շէնքը գցվում է միաբանների մօտ։ Այդ կողմում են գտնվում և հաց թխելու փուռերը, սառուցատունը, գինու պահարանները, որոնք առաջ աւելի յարմարաւոր տեղ էին շինված, քան թէ այժմ։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Այս տարի Պետերբուրգի Կայսերական հավալարանի իրաւաբանական բաժնում 321 ուսանողներից աւարտեցին ուսումը 249 հոգի։ Այս թւում՝ կովկասեցի ռուսներ՝ 6 հոգի (սրանցից 2 հոգի առաջին աստիճանի դիպլոմով, իսկ մնացածները՝ երկրորդ աստիճանի), վրացիներ՝ 7 հոգի (սրանցից մէկը միայն առաջին աստիճանի և 6 հոգի երկրորդ աստիճանի դիպլոմով), հայերից աւարտեցին ընդամենը 5 հոգի, հաշվելով այս թւում նաև 2 աստրախանցի հայերին։ Հայերի անունները՝ առաջին աստիճանի դիպլոմով—Աթաբէգեան Միքայէլ (շուշեցի), Աթաբէգեան Ալէքսանդր (աստրախանցի), Կուզանեան Գէորգ (Թիֆլիսեցի) և Տիգրանեան Սիրական (ալէքսանդրոպոլցի), և երկրորդ աստիճանի դիպլոմով՝ Դաղաչեան Սարգիս (աստրախանցի)»։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Պուշկինի հարիւրամեակը տօնեցին և Գէորգեան ճեմարանը, և տեղիս նորաբաց տղայոց դպրոցը։ Այդ օրը ճեմարանը զարդարված էր գոյնզգոյն դրօշակներով և պատրաստվում էր երեկոյեան ճրագավառութեան և հրախաղութեան, սակայն բարձրացած սաստիկ քամին արգելեց ամեն ինչ»։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Լուր է տարածված, որ ճեմարանի տեսուչ պ. Կոստանեանց հրաժարական է տուել և չէ ուզում այլ ևս պաշտօն վարել ճեմարանի մէջ։ Թէև դժուարանում ենք հաւատալ պ. Կոստանեանցի հրաժարականին, անցեալ տարիների փորձերը աչքի առաջ ունենալով, սակայն ուսուցչական խմբի բռնած դիրքը, որի մէջ մի մասը մտածում է արդէն իր համար պաշտօն ձեռք բերելու մի այլ դպրոցում, պարզ ցոյց է տալիս, որ ինչ որ մի բան պատահել է ուսուցչական կազմի մէջ»։

—

Զիբրայէլի գաւառի ՂԱՐԱԲՈՒԼԱՂ գիւղից մեզ հաղորդում են, որ մորեխը մեծ վնաս տուեց գաւառի հիւսիս-արևելեան մասին, որտեղ թափառականների մի մասը ունի ընդարձակ արտեր։ Մորեխը քիչ վնաս տուեց լեռնային մասերին։ Զը նայելով, որ շատ ժողովուրդ էր դուրս ղրկված մորեխը ջարդելու համար, բայց նա դարձեալ զգալի աւերումներ կատարեց։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Վան, մայիսի 25-ին

Վերջապէս, ամսոյս 20-ին, Վանայ այցելու հովիւը՝ Ներսէս եպիսկոպոս և իր օգնականը՝ Վահրիճ վարդապետ տեղս ժամանեցին։ Թեմիս նախորդ առաջնորդական տեղապահ Ստեփան վարդապետ և Լիմ ու Կոտուց անապատներու վանահայր Յովսէփ եպիսկոպոս, քաղաքական և կրօնական ժողովներու անդամոց հետ, մինչև Աւանց գիւղ փութացեր էին դիմաւորելու. քահանայ մը և երկու աշխարհական երեսփոխաններն մինչև Սև գետ գնացած էին։ Աւանց գիւղ եկած էին նաև բոլոր վարժարանաց աշակերտներէն 20-ական հոգի իրենց ուսուցիչներով և հարիւրաւոր պատուաւոր ազգայիններ, ոմանք ոտքով, ոմանք ձիով կամ կառքով։ Երբ Ներսէս սրբազանի կառքը մօտեցաւ, աշակերտներ հերթով սկսան երգել։ Նորին գերապատուութիւն իւրաքանչիւր խումբի մօտ կը կեցնէր իր կառքը և շնորհակալութիւն կը յայտնէր։ Մօտենալով եկեղեցական դասու կեցած տեղը, կառքէն վար իջաւ, ըստ սովորութեան ողջագուրուելէ յետոյ, Ներսէս եպիսկոպոս և Վահրիճ վարդապետ հանդիսաւոր առին նոյն գիւղի մէջ Աղենց քէօշկը։ Դիմաւորող եկեղեցականներ և աշխարհականներ նոյնպէս նոյն քէօշկի ներս ու դուրս դաղար առին, դպրոցական աշակերտներ կը շարունակէին երգել, իսկ քէօշկին ներս հիւրեր կը մեծարուէին թէյով և օշարակով։ Այս միջոցին քէօշկին մէջ Համբարձում էֆ. Երամեան իր հնչուն ձայնով և սահուն ոճով կարճ, բայց գեղեցիկ ատենախօսութիւն մը ըրաւ և ժողովրդեան կողմէ բարի գալուստ մաղթեց Ներսէս եպիսկոպոսին և իր օգնականին, բացատրելով այն յոյսեր, որ դրուած են անոնց վրա և յայտնելով ժողովրդեան անհուն բերկրութիւն, որ բաղդ կունենար վերջապէս ունենալ, լեզուագէտ և փորձուած հովիւ մը ունենալու։ Սոյն ատենախօսութենէն յետոյ ներկայ եղողներ ծափահարեցին զՆերսէս սրբազան։ Նորին գերապատուութիւն մի քանի խօսքերով իր շնորհակալութիւն յայտնեց և ըսաւ, որ առանց ժողովրդեան համերաշխ գործակցութեան իր բոլոր ջանքերն իզուր պիտի լինին։ Ժամ 8½ էր, երբ այսպէս կէս ժամ հանդչելէ յետոյ, ամէնք քէօշկէն մեկնեցան դէպի քաղաք։ Այն ատեն գեղեցիկ և հանդիսաւոր գնացք մը կազմուեցաւ. առջևէն կերթային հեծեալ ոստիկաններ և ոստիկան-զինուորներ, ասոնց ետևէն Ներսէս եպիսկոպոսի և Վահրիճ վարդապետի կառքը և ապա տասնէ աւելի կառքեր իրարու ետևէ և բազմաթիւ հեծեալ անձինք։ Աւանց գիւղէն մինչև քաղաք ձգվող ճանապարհի երկու կողմ դալարաւէտ արտերու եզերք տեղ-տեղ խումբ-խումբ կանգնած էր ժողովուրդ բարևելու համար իր նորընտիր հոգևոր հովիւը։ Կէս ժամ յետոյ հանդիսաւոր թափորը հասաւ Քաղաքամիջի առաջնորդանիստ եկեղեցին Ս. Նշան։ Եկեղեցին լեցուած էր խուռն բազմութեամբ։ Ներսէս եպիսկոպոս քարոզ չը խօսեց, այլ ժողովուրդն օրհնելէ յետոյ առաջնորդարան եկաւ։

Առաջնորդարանի մէջ քարտուղարը Ստեփան վարդապետի կողմանէ ճառ մը կարդաց, որ կը ներկայացնէր ազգային գործոց ներկայ վիճակը և գոհութիւն կը յայտնէր, որ բոլոր գիւղեր դարձած էին ի գիրկ մայրենի եկեղեցւոյ և բարեբախտ կը համարէր զՆերսէս եպիսկոպոս, որ իր հօտը ի մի ամփոփեալ կը գտնէր։ Անշուշտ Ներսէս եպիսկոպոս ինքն անձամբ պիտի վերահասու լինի թէ նոյն վարդագոյն վիճակը նկարագրուածին պէս է թէ ոչ, թէ իրաւ քաղաքական և կրօնական ժողովներ անունով թէ իրապէս կան։

Ներսէս սրբազան սակաւախօս, խոհուն և աշխոյժ կերևի. առհասարակ իր թողած տպաւորութիւն լաւ է։ Եթէ այժմէն չը թողու որ ամեն մարդ դայ և առաջնորդարանի մէջ ուզէ աղդեցութիւն բանեցնել (ինչպէս Ստեփան վարդապետի օրով) և շատ ականջ չը կախէ արդի ինքնակոչ վարչութեան, որ ամեն զեղծմանց պատճառ եղած է, այլ աւելի առաջնորդուի իր սեփական կամքէն ու փորձառութենէն, կը յուսացվի թէ պիտի կարողանայ գործ մը տեսնել։ Վանայ մէջ սրբազանը պիտի վայելէ ժողովրդականութիւն և կարդ մը անկեղծ անձանց աջակցութիւն, եթէ ինքն կարենայ զանոնք գըտնել և իր շուրջ հաւաքել։

Վանքերու, ծխական դպրոցներու, եկեղեցիներու և եկեղեցականաց վիճակ բարւոքելու համար մեծամեծ ջանքեր հարկաւոր են, ինչ-որ կարճ միջոցի մէջ չը լինիր, և կը յուսանք որ Ներսէս եպիսկոպոս պիտի ուզէ յօգուտ Վանայ ընդարձակ թեմին երկար ատեն մեր մէջ մնալ, կուրծք տալ դժուարութեանց և իրերն իրենց նախկին վիճակին բերել։

Ներսէս սրբազան երկու օր յետոյ ներկայացաւ նահանգիս կուսակալին, իր պաշտօնական ներն են՝ առաջին աստիճանի դիպլոմով—Աթաբէգեան Միքայէլ (շուշեցի), Աթաբէգեան Ալէքսանդր (աստրախանցի), Կուզանեան Գէորգ (Թիֆլիսեցի) և Տիգրանեան Սիրական (ալէքսանդրոպոլցի), և երկրորդ աստիճանի դիպլոմով՝ Դաղաչեան Սարգիս (աստրախանցի)»։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Պուշկինի հարիւրամեակը տօնեցին և Գէորգեան ճեմարանը, և տեղիս նորաբաց տղայոց դպրոցը։ Այդ օրը ճեմարանը զարդարված էր գոյնզգոյն դրօշակներով և պատրաստվում էր երեկոյեան ճրագավառութեան և հրախաղութեան, սակայն բարձրացած սաստիկ քամին արգելեց ամեն ինչ»։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Լուր է տարածված, որ ճեմարանի տեսուչ պ. Կոստանեանց հրաժարական է տուել և չէ ուզում այլ ևս պաշտօն վարել ճեմարանի մէջ։ Թէև դժուարանում ենք հաւատալ պ. Կոստանեանցի հրաժարականին, անցեալ տարիների փորձերը աչքի առաջ ունենալով, սակայն ուսուցչական խմբի բռնած դիրքը, որի մէջ մի մասը մտածում է արդէն իր համար պաշտօն ձեռք բերելու մի այլ դպրոցում, պարզ ցոյց է տալիս, որ ինչ որ մի բան պատահել է ուսուցչական կազմի մէջ»։

—

Զիբրայէլի գաւառի ՂԱՐԱԲՈՒԼԱՂ գիւղից մեզ հաղորդում են, որ մորեխը մեծ վնաս տուեց գաւառի հիւսիս-արևելեան մասին, որտեղ թափառականների մի մասը ունի ընդարձակ արտեր։ Մորեխը քիչ վնաս տուեց լեռնային մասերին։ Զը նայելով, որ շատ ժողովուրդ էր դուրս ղրկված մորեխը ջարդելու համար, բայց նա դարձեալ զգալի աւերումներ կատարեց։

ջում և այդ բոլոր պահանջներին բաւարարութիւն տալու համար Մուզաֆֆէրէդդինը չունէր ոչ մի միջոց։ Հարկ եղաւ դիմել անգլիական բանկին և փոխառութիւն կնքել. բայց որովհետև բանկն առանց գրաւականի չը կամեցաւ ոչինչ տալ, ուստի ստիպվեց բանալ Նասրէդդին Շահի գանձարանը և հանել ինչքան ոսկի որ կար. այդ ոսկին կշեռքով ծախելով բանկին (որովհետև մեծ մասը անօթեղէն էր և ձուլածոյ), ընդամենը գոյացաւ 10 միլիոն թուման փող կամ 18 միլիոն ռուբլի։ Այդ ոսկին էլ անգլիական բանկը ուղարկեց Անգլիա և դրանով թէ Շահի գանձարանը դատարկվեց և թէ ոսկին վերացվեց Պարսկաստանից։ Այդ իրողութիւնից յետոյ հասկանալի է, թէ ինչու արծաթ փողը կամ ղրանը աւելի ևս ընկաւ և դրամական տագնապը աւելի սաստկացաւ։

Եւ այսօր այդ տագնապի վրա մի աւելի մեծ տագնապ աւելանում է ներկայ տարվայ մայիսին կայացած ռուսաց Կայսրի Բարձրագոյն հրամանով, որով արգելվում է ղրանի մուտքը Անդրկովկասի և Անդրկասպեան երկիրները։ Ինչպէս յայտնի է, Անդրկասպեան երկիրներում—Թուրքեստանում, Բուխարայում գործածական դրամը մինչև այսօր պարսից ղրանն էր։ Պարսկաստանից վաճառականները մեծ քանակութեամբ ղրան էին տանում Բագու և այդ տեղից ղրանը տարածվում էր Թիւրքմէնների մէջ, Բուխարա, Թիւրքեստան և ամբողջ առևտուրը ղրանի վրա էր կատարվում, որով ղրանի յարգը և արժէքը որոշ աստիճանի վրա էր կանգնած մնում. վերջապէս, Պարսկաստանը ազատվում էր ղրանի ահագին քանակութեան մի մասից։ Այժմ, երբ ղրանի մուտքն արգելվեց, երբ ղրանը այլ ևս չի ընդունվի Ռուսաստանում իբրև դրամ, փոխադրված ղրանի ահագին քանակութիւնը ամբողջովին կը վերադառնայ Պարսկաստան և աւելացնելով Պարսկաստանի մէջ գտնված քանակութիւնը, անտարակոյս, աւելի կիջեցնէ ղրանի արժէքը և պարսկական դրամը աւելի կէժանանայ, որով և ահագին նիւթական կորուստ կը լինի ամբողջ երկրի համար։

Մենք բացատրեցինք դրամական այն ահաւոր տագնապի իսկական պատճառները, որով այսօր տառապում է ամբողջ Պարսկաստանը։ Թէ ինչ կը լինի ապագան, արդեօք աւելի ահաւոր կը լինի, թէ մի ելք կը մտածվի անխուսափելի մանկութեան առաջն առնելու համար, այդ թողնենք առ այժմ Ալլահի գթութեան և տնօրէնութեան։ Ինչալլահ,—դոչենք պարսկի հետամեն բան լաւ կը լինի...

Հ. Առաքելեան

էին ոսկին, մինչև որ այդ մետալը կամ ոսկի դրամը բոլորովին անհետացաւ և երկիրը լցվեց արծաթի և պղնձի դրամներով։ Վրա հասաւ այդ միջոցին և արծաթի էժանանալը և, տարակոյս չը կայ, ամենքը սկսեցին կասկածով վերաբերվել բանկի դուրս հանած թղթադրամներին և առևտրականները ղդուշացին հնչուն դրամի տեղ վեր առնել թղթադրամը, քանի որ ոչ բանկը, ոչ պարսից կառավարութիւնը, ոսկու բացակայութեան պատճառով, չը պէտք է կարողանային թղթադրամի արժէքը ոսկով վճարել։ Պէտք է ասել, որ բանկն ինքն ևս տուժեց. նրա ակցիաները այժմ կիսով չափ ընկած են և վերջին տարիներս դէֆիցիտով է ծածկում իր գործառնութիւնները։

Սակայն մի ուրիշ հանդամանք ևս աւելի սաստկացրեց դրամական տագնապը Պարսկաստանում։ Մենք տեսանք, որ այդ տագնապի գլխաւոր պատճառն այն է, որ երկրի դրամական միջոցները կամ արժէքը ոսկի չէ, այսինքն մի հաստատ, յարատև ու անփոփոխ արժէք ունեցող մետալ չէ, այլ արծաթն է, որի արժէքը օրէցօր ընկնում է. բայց Նասրէդդին Շահի ժամանակ արծաթ դրամի կամ ղրանի արժէքը այնքան չէր ընկած, ինչպէս այժմ, որովհետև ընդհանուր համոզմունք կար, թէ Շահը իր գանձարանում տասնեակ միլիոնաւոր ոսկի ունի, թէ իբր դրամ և թէ զուտ ձուլածոյ։ Պէտք է ասել, որ ինքն Նասրէդդին Շահը, որ արեւելքի պատմութեան մէջ պէտք է հռչակվի իբրև ճարպիկ արևելեան քաղաքագէտ, ամեն կերպ աշխատում էր տարածել այդ համոզմունքը և ոչ միայն Իրանը, այլ և Եւրոպան համոզված էր, թէ Նասրէդդին Շահի գանձարանը պարունակում է իր մէջ գոնէ մի քանի տասնեակ միլիոն ոսկի։ Բայց Նասրէդդին Շահի մահից յետոյ երկրի իսկական վիճակը պարզվեց և յայտնվեց, որ այդ հարստութիւնը առասպելական է եղել և գանձարանը հարիւ 10 միլիոն ոսկի է պարունակում։ Դժբաղդաբար, այդ 10 միլիոնն էլ ամբողջովին ծախսվեց, երբ Նասրէդդինը սպանվելով, Մուզաֆֆէրէդդինը Շահ դարձաւ։ Հանդուցեալ Շահի ժամանակ զօրքի մեծ մասը մի քանի տարի ռոճիկ չէր ստացել. պէտք էր գոհացում տալ զօրքին, որպէս զի արդելքներ չը յարուցանի նոր Շահի դահակալութեան դէմ. միւս կողմից անգլիական կառավարութիւնը խստիւ պահանջում էր այն գումարը, որ խոստացված էր Անգլիային բէժիի խափանման պատճառով, այն է 500,000 լիրա կամ 5 միլիոն ռուբլի. բացի դրանից նոր Շահը մեծ պարտքեր ունէր Թաւրիզում, որ պէտք էր վճարել մեկնելուց առաջ. ճանապարհորդութիւնն ևս Թաւրիզից Թէհրան ահագին ծախս էր պահանջում և այդ բոլոր պահանջներին բաւարարութիւն տալու համար Մուզաֆֆէրէդդինը չունէր ոչ մի միջոց։ Հարկ եղաւ դիմել անգլիական բանկին և փոխառութիւն կնքել. բայց որովհետև բանկն առանց գրաւականի չը կամեցաւ ոչինչ տալ, ուստի ստիպվեց բանալ Նասրէդդին Շահի գանձարանը և հանել ինչքան ոսկի որ կար. այդ ոսկին կշեռքով ծախելով բանկին (որովհետև մեծ մասը անօթեղէն էր և ձուլածոյ), ընդամենը գոյացաւ 10 միլիոն թուման փող կամ 18 միլիոն ռուբլի։ Այդ ոսկին էլ անգլիական բանկը ուղարկեց Անգլիա և դրանով թէ Շահի գանձարանը դատարկվեց և թէ ոսկին վերացվեց Պարսկաստանից։ Այդ իրողութիւնից յետոյ հասկանալի է, թէ ինչու արծաթ փողը կամ ղրանը աւելի ևս ընկաւ և դրամական տագնապը աւելի սաստկացաւ։

Եւ այսօր այդ տագնապի վրա մի աւելի մեծ տագնապ աւելանում է ներկայ տարվայ մայիսին կայացած ռուսաց Կայսրի Բարձրագոյն հրամանով, որով արգելվում է ղրանի մուտքը Անդրկովկասի և Անդրկասպեան երկիրները։ Ինչպէս յայտնի է, Անդրկասպեան երկիրներում—Թուրքեստանում, Բուխարայում գործածական դրամը մինչև այսօր պարսից ղրանն էր։ Պարսկաստանից վաճառականները մեծ քանակութեամբ ղրան էին տանում Բագու և այդ տեղից ղրանը տարածվում էր Թիւրքմէնների մէջ, Բուխարա, Թիւրքեստան և ամբողջ առևտուրը ղրանի վրա էր կատարվում, որով ղրանի յարգը և արժէքը որոշ աստիճանի վրա էր կանգնած մնում. վերջապէս, Պարսկաստանը ազատվում էր ղրանի ահագին քանակութեան մի մասից։ Այժմ, երբ ղրանի մուտքն արգելվեց, երբ ղրանը այլ ևս չի ընդունվի Ռուսաստանում իբրև դրամ, փոխադրված ղրանի ահագին քանակութիւնը ամբողջովին կը վերադառնայ Պարսկաստան և աւելացնելով Պարսկաստանի մէջ գտնված քանակութիւնը, անտարակոյս, աւելի կիջեցնէ ղրանի արժէքը և պարսկական դրամը աւելի կէժանանայ, որով և ահագին նիւթական կորուստ կը լինի ամբողջ երկրի համար։

Մենք բացատրեցինք դրամական այն ահաւոր տագնապի իսկական պատճառները, որով այսօր տառապում է ամբողջ Պարսկաստանը։ Թէ ինչ կը լինի ապագան, արդեօք աւելի ահաւոր կը լինի, թէ մի ելք կը մտածվի անխուսափելի մանկութեան առաջն առնելու համար, այդ թողնենք առ այժմ Ալլահի գթութեան և տնօրէնութեան։ Ինչալլահ,—դոչենք պարսկի հետամեն բան լաւ կը լինի...

Հ. Առաքելեան

թղթեր ներկայացնելու համար և մեծ պատուով ընդունուեցաւ։ Յաջորդ օր խօսեց իր անդրանիկ քարոզը Քաղաքամիջի ս. Վարդան եկեղեցւոյ մէջ. փոքրիկ եկեղեցին լեցուած էր 300-է աւելի անձերով։ Ներսէս եպիսկոպոս իր պարզ և ազդու ոճով խօսեց իր և ժողովրդեան փոխադարձ պարտականութեանց վրայ, յորդորեց ժողովուրդ սիրոյ և հաւատարմութեան, մանաւանդ մայրենի եկեղեցւոյն կապուիլ ջերմ սիրով։ Ճըշմարիտ քրիստոնեան և ճշմարիտ ազգասէրն այն է, ըսաւ, որ չի բաժնուիր իր եկեղեցիէն։ Ներսէս եպիսկոպոս իր այս անդրանիկ քարոզով յայտնեց, որ ինք բնաւորութեամբ խիստ է, վեր է ամեն կուսակցական հաշիւներէ, գործիք չը պիտի լինի շահասէր անձանց, ամեն ինչ պիտի ընէ միմիայն ժողովրդեան և եկեղեցւոյն շահն ունենալով ի նկատի, ժողովուրդ չը պիտի փայփայէ երկար ատեն Վանայ առաջնորդ մնալու համար, այլ ուզած ատեն պիտի ձգէ և հեռանայ, երբ իրեն համամիտ չը գտնէ վանցիներ։ Կը հաւնինք Ներսէս սրբազանի անկեղծ համարձակախօսութեան և եթէ մինչև վերջ իր յայտարարութեան համեմատ գործէ, այն ատեն յուսալի է, որ վիճակ բարւոքի։

Մայիս ամսոյն մէջ քանիցս ունեցանք լաւ անձրևներ, մարտի և ապրիլի երաշտութենէն թարշամած արտեր վերակենդանացան, այժմէն յառաջիկայ հունձը յոյշող կը թուի։

Կաթոլիկ դարձածներ հետզհետէ մայրենի եկեղեցւոյ գիրկը կը վերադառնան, կը մնան միայն սակաւաթիւ անձինք, որոնք դեռ պնակալէզ կենդանիներու նման կը յածին կաթոլիկ առաջնորդ հայր Անտոն Զնտոյեանի շուրջը՝ անկէ նեռուած չնչին այլ ևս անիւղ պատառներ իրարու ձեռքէն յափշտակելու համար։ Անտոն վարդապետ վերջին օրերս ձիէն վար իյնալով ոտք կոտրած է և այժմ անկողին ինկած կը տառապի։ Որբանոցի գործը այժմ ամենէն աւելի աչքի կը զարնէ։ Կաթոլիկ բէռներու որբերէն 19 հոգի՞արդէն մեծ պաղքին փախած էին, մնացեալ 6 հոգին ալ երկու շաբաթ առաջ փախան։ Այս որբերն առ այժմ կը պատրաստուին Վարագայ որբանոցին մէջ։ Միսիոնարաց որբերը ընդհակառակն շատ գոհ են, հոն բռնի կրօնափոխութեան առաջարկութիւն չը կայ։ Միսիոնարաց որբանոցի պատսպարելոց թիւն է 400 մանչ և 200 աղջիկ որբ։

Պատրիարքարանի նահանգիս մէջ բացած չորս որբանոցներէն մին, այն է Ս. Գրիգորի վանուց որբանոցը իսկապես սեռին կը պատկանի։ Այս որբանոցը կը պահպանուի Նիւ-Եորքի տիկնանց ընկերութեան ծախքով, հաստատուած է ոչ թէ վանքին մէջ, այլ Այդեհատի մէջ։ Որբուհեաց թիւն է 35։ Այս թիւը պէտք էր շատ աւելի լինէր, որովհետև անտէր որբուհիներ աւելի են քան մանչեր։ Սոյն որբանոցը կը խնամուի Ս. Գրիգորի վանուց հոգաբարձութեան կողմէ, որ կազմուած է խղճամիտ անձերէ։ Որբուհեաց նիւթական մնունդ և բարոյական դաստիարակութիւնը լաւ ձեռներու յանձնուած է։ Որբանոցն այցելողն գոհ կը մնայ խեղճ որբուհեաց առոյգ կերպարանքներն և հաստատութեան ներքին բարեկարգութիւնն տեսնելով։ Կովկասի բարեպաշտ տիկիններու կը յանձնարարեմ այս լաւ հաստատութիւնը, եթէ կը փափագին որբուհիներ որդեգրել։

Թղթակից

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, յունիսի 1-ին

Այս քանի օրերս այստեղ հասաւ Խոյի, Սալմաստի և Ուրմիի ընդհանուր կառավարիչ Իգբալ-Իւլ-Միւլքը, որ տարիներ առաջ Լոնդոնի դեսպան է եղել և թուում է, թէ եւրոպական դաղափարներից բաւական ազդված մի մարդ է։ Ցուսալի է, որ Պարսկաստանի այս հեռաւոր, մոռացված և բոլորովին անխնամ թողնված մեծ նահանգը փոքր ինչ ուշադրութեան կարժանանայ և գոնէ մի կերպով ճնշված, հարստահարված և արիւնաքամ եղած ժողովրդի անվերջ ցաւերին դարման կը տրվի։ Այստեղ, Պարսկաստանում, դժբաղդաբար, հինական բարենորոգումներ և մեծամեծ կարևոր փոփոխութիւններ բոլորովին անսպասելի են, որովհետև ոչ դրանց անհրաժեշտութիւնը զգացող կայ և ոչ էլ այդ պէտքերը լրացնելու փափաք, նպատակ և ձեռնհասութիւն։ Այս կայ միայն, որ Իգբալ-Միւլքը, ուղղակի Թէհրանից նշանակված լինելով, Թաւրիզի սովորական կամայականութիւններից և խարդաւանքներից ազատած՝ պէտք է համարել Ատրպատականի այս երեակ նորակազմ դուառները։

Մօտ երեք շաբաթ է, որ նա այստեղ է մեծ սվիտայով և ամեն կողմից քրդական ազատներ, իրանց զինված ձիաւորներով, հաւաքվել են Դիլման՝ նոր Հաքիմի հետ ծանօթանալու։ Նա իր հետ բերել է Թէհրանից մի հայազգի երիտասարդ բժիշկ, դոկտոր Արշակ-խան Կարապետեան, որ մի ազնիւ անձնաւորութիւն է եւրոպական կրթութիւն առած և համակրելի բնաւորութեամբ. նրա մշտական ներկայութիւնը և ընկերակցութիւնը Հաքիմի մօտ կարող է առհասարակ օգտակար նշանակութիւն ունենալ երկրի բարւոք կառավարութեան համար։

Հաքիմը չուտով ուղևորվելու է Ուրմի, իր բնակութիւնը այնտեղ հաստատելու համար։ Այստեղ, Սալմաստում, դժբաղդաբար, նրա ներկայութիւնից չօգտվեց հայ հասարակութիւնը։ Այնքան ցաւեր, խնդիրներ և գործեր կան կուտված և սակայն ոչ մէկի համար նրան դիմում կամ բողոք չեղաւ. ամեն բան մնում է առաջվայ պէս, մինչև անգամ լուր է պատում, որ օսմանեան Շահբէնդէրի պահանջումով այս օրերս կրկին հայոց գիւղերը և տները նորից խուզարկելու են և կրկին «իլթիմատ—խոստումնագիր—առնելու են ժողովրդից, որ «դաշաղներ» չը պահեն, որոնք սակայն միայն քաղցած պաշտօնեաների ցնդած ուղեղներում իսկապէս գոյութիւն ունեն։ Հէնց այդ անվերջ խարդաւանքներին կարելի էր միանգամ ընդ միշտ վախճան տալ, դիմելով ուղղակի նորընտիր Հաքիմին. բայց «բոժոժ» կախողը միշտ պակասում է այդպիսի պարագաներում և հասարակութիւնը պէտք է կրէ դառն հետևանքը։

Մայիսի 16-ին Խոյ ժամանեց հանրածանօթ դոկտոր Լէպսիուսը, որ Բերլինում հաստատեց գերմանական Հիլֆսքոմիտը Հայաստանի թշուառ ժողովրդին օգնութիւն մատուցանելու համար։ Պաստոր ֆոն Բէրդմանի տեսչութեան ներքև ընկերութեան որբանոցները Պարսկաստանի այս կողմերում խայտառակ անցքերի պատճառով բոլորովին խանդարման ենթարկվեցին և Բէրդմանի դէմ բողոքի ձայներ բարձրացան, որոնց, սակայն, մեծանուն դոկտորը բնաւ կարևորութիւն տալ չը կամեցաւ անցեալ տարի. բայց այս տարի ստիպված, վերջապէս, եկաւ անձամբ՝ բարդված կնճռոտ խնդիրները քննելու և գործը կանոնաւոր կերպով վերակազմելու։

Պաստոր ֆոն Բէրդմանը իրան յանձնած որբանոցը Ղալասարի պէս մի ամենայարմար տեղից Խոյ փոխադրեց անցեալ տարի և այդ յիմարութեան պատիժը կրեց նա այս տարի, որովհետև քիչ էր մնացել, որ Մուհարրէմի 10-ին, այսինքն Աշուրէի օրը, կատաղի ամբոխը բոլոր որբերին կոտորէր և այդ խղճալի երեխաները ստիպված, ոտաբոբիկ և ամենաթշուառ դրութեան մէջ, դիշերով, Ուրմիի ասօրական որբանոցը փոխադրվեցին և այժմ էլ կրկին վերադառնալու են Խոյ։ Տեսնենք թերևս բարեսէր դոկտոր Լէպսիուս, ծանօթանալով մօտից որբերի ցաւալի վիճակին, մի կարգադրութիւն անէ և որբանոցը վերստին փոխադրէ Սալմաստ, ուր նրանք, ի հարկէ, աւելի մխիթարական կեանք կունենան։ Անհաւասիկ մի կարևոր հարց, որի մասին արժէ իսկապէս գրել, խօսել, խորհել և ամենալուրջ ուշադրութեամբ քննել, թէ ինչեր են կատարվում այստեղ, Պարսկաստանում էլ, մեր աչքերի առաջ, օրը ցերեկով, մարդասիրական պատրուակի տակ և մարդասիրական քողին ներքև։

Ր.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Գերմանական պատուիրակը խաղաղութեան կոնֆէրէնցիայում, Կէօնիգսբէրգի պրոֆէսոր Յօրն, «Frank. Zeitung» լրագրի խօսքով, մի քանի օրով գնաց Բերլին՝ կառավարութեան հետ խորհրդակցելու համար։ «Köln. Zeitung» լրագրի խօսքով, զինադադարի հարցը քննող յանձնաժողովի աշխատանքները ապարդիւն եղան և անաջողութեան հանդիպեցին։ Այդ յանձնաժողովի աշխատանքների մասին թէպէտ և պաշտօնական տեղեկութիւնները ժամուլի մէջ ասում են, թէ մի քանի առաջարկութիւններ են ընդունված ձայների մեծամասնութեամբ, բայց մեծամասնութեան այդ վճիռները ոչինչ նշանակութիւն չունեն, որովհետև նիստերում բոլոր պատուիրակների ներկայութեամբ առաջարկութիւնները պէտք է ընդունվեն միաձայն։ Լրագիրը հաւատացնում է, որ այդ միաձայնութիւնը չը կար ոչ մի հարցի վերաբերմամբ։

—Տրապիզոնի վալին հաղորդում է, որ զինաւորված քրիստոնեաների հրոսակները, անցնելով պարսից սահմանից, արդէն մի քանի անգամ յարձակում գործեցին թիւրքաց գիւղերի վրա և ի լուսն ամենի, մի քանի օր առաջ սրի անցկացրին վրանում քնած գիւղական տանուտէրի ամբողջ ընտանիքը։ Սպանութեան տեղում մնաց վիրաւորված քրիստոնեան, որը «սպառնալիքների» ազդեցութեան տակ խոստովանվեց, որ սահմանի վրա գտնվող թիւրքաց գիւղերի վրա յարձակվող հրոսակախումբը բաղկացած է զինաւորված քրիստոնեաներից, որոնք երդվել են վրէժ լուծել թիւրքերից իրանց եղբայրակիցներին կոտորելու համար և, աւելի ապահով կերպով իրանց նպատակին հասնելու համար, այդ հրոսակախումբը չիա մահմեդական աղանդն է ընդունել։ Այդ հանդամանքը առիթ տուեց Իլդիզ-Քիոսկին կասկածով վերաբերվել Պարսկաստանին, որ նա խորամանկ նպատակներ ունի։ Միրզա-Մահմուդ խանը ստիպված է լինում համարեա ամեն օր այցելել սուլթանի պալատը, ուր դեռ նորերս հնարաւորութիւն էին հատկացում դաշնակցութիւնը շահն-շահի հետ՝ մահմեդականութիւնը միացնելու համար։ Դժուար է որոշել, թէ ինչ խօսակցութիւն է տեղի ունենում սուլթանի լիազօրի և Իրանի ներկայացուցչի մէջ, փաստը միայն այն է, որ դեսպանի հանդիստ, ուռնասիրտ և փառահեղ դէմքը Իլդիզ-Քիոսկ գնալու ժամանակ, կատարելապէս փոխվում է, երբ նա դուրս է գալիս այնտեղից։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

11 յունիսի

ԼՈՆԴՈՆ։ Պատգամաւորների ժողով։ Տօմսոն հարցնում է. ճշմարիտ է արդեօք, որ Ռուսաստանը կապալով է վերցրել Բենդէր-Աբասը։ Բրոդրիկ պատասխանում է, որ նա այդպիսի մի լուր չէ ստացել։

ԼՈՆԴՈՆ։ Այսօր Բիչմոնդում տեղի ունեցաւ պրինցուհի Մարիա Միկլենբուրգ-Ստրէլիցկու պսակադրութիւնը կոմս Զիմիտելի հետ։ Կէմբրիջեան դուքսը ներկայ էր պսակադրութեանը, որը կատարվեց կաթոլիկ եկեղեցու ծէսով։

ԼՈՆԴՈՆ։ Մադրիդի նահանգապետը հաղորդում է հեռագրով, որ Տինվէլեան շրջանում խաղաղութիւնը վերականգնված է։ Տեղիք չը կայ ենթադրելու, թէ անկարգութիւնները կարող են տարածվել դէպի հարաւ։ Ձերբակալված են 400 հոգի։ Ամեն տեղ զգուշութեան միջոցներ են ձեռք առնված։

ԲԵՐԼԻՆ։ Կայսրը ստատս-սեկրետար Բիլօվին կոմսութեան տիտղոս շնորհեց։

Կ. ՊՕԼԻՍ։ Հանքերի կառավարիչ Շէվալիէ, որին փախցրել էին աւազակները, ազատված է։

ՊԱՐԻԶ։ Վալդէկ-Ռուսսօի աշխատակիցները, խորհրդակցութիւնից յետոյ, գնացին Ելիսեան պալատը։ Մինիստրութիւնը վերջնականապէս կազմակերպվեց հետևեալ ձևով. Վալդէկ-Ռուսսո—նախագահ և ներքին գործերի մինիստր, Դէլկասէ—արտաքին գործերի, գեներալ Գալլիֆէ—զինուորական, Լանէսան—ծովային, Մոնիս—արդարադատութեան, Կալիո — ֆինանսների, Միլլերան—առևտրի, Լէյգ—ժողովրդական լուսաւորութեան, Դէկրէ — կոլոնիաների, Ժակ Դիւպիւի—երկրագործութեան, Բէդէն—հասարակական աշխատանքների։

ՊԱՐԻԶ։ Մուժը պահպանում է պօստ-հեռագրական ստատս-սեկրետարի օգնականի պաշտօնը։ Նոր մինիստրները կը ժողովվեն Ելիսեան պալատը վաղը, Լուբէի նախագահութեամբ։ Հաւատացնում են, որ մինիստրական յայտագրից առաջ ձեռք կառնվեն միջոցներ մի քանի զինուորականների դէմ, որոնք յանցաւոր են գտնվել զինուորական դիսցիպլինան թէ խօսքով և թէ գործով խախտելու մէջ։ Գեներալ Մետցինգերին ձեռք չեն տայ, բայց գեներալ Գարշիդ և գնդապետ Սակսէ պատժի կենթարկվեն։ Մինիստրական յայտագիրը կը բաւականանայ, ինչպէս ասում են, յայտնելով, որ մինիստրութիւնը ցանկանում է ազատել Ֆրանսիան այժմեան ճգնաժամից, կը պահանջի պարլամէնտից, որպէս զի նա իր կարծիքը կազմէ մինիստրութեան գործողութիւններից, և ոչ թէ աչքի առաջ ունենայ նրա կազմը, և կը դիմի բոլոր հանրապետականների միաբանութեանը։

Մինիստրութիւնը հէնց նոր կազմակերպվեց, և ահա արդէն բազմաթիւ լուրեր սկսեցին տարածվել, որոնց նպատակն է ճնշում գործ դնել հասարակական կարծիքի վրա։ Այդ բոլոր լուրերի մէջ մէկն անպայման սուտ է, այն է, թէ մինիստրութիւնը վճռել է դադարեցնել պատգամաւորների ժողովի նիստերը։

ՊԱՐԻԶ։ Զափաւոր և հանրապետական լրագիրները ասում են, որ Վալդէկ-Ռուսսոի մինիստրութեան կազմը մեծ զարմանք պատճառեց։ Արմատական և վերաքննութեան կողմնակից լրագիրները չնորհաւորում են Վալդէկին նրա ցոյց տուած համարձակութեան համար։ Սօցիալիստների օրգանները նոյնպիսի կարծիք են յայտնում։ «Matin» լրագիրը յայտարարում է, որ Գալլիֆէ իսկոյն կը նշանակէ Բրիւժէրին Ցուրլինդէնի տեղ, կարձակի, առանց խնդիրքի, Բուադէֆրին և Գոնդին, անպաշտօն կը թողնի Պէլիէին, Գարիզից կը հեռացնի Բօժէին։ Նոր մինիստրներից մէկն ասեց «Matin» լրագրի աշխատակցին. «Մենք ամենևին յափշտակվող մինիստրութիւն չենք։ Մենք հաստատակամութեան և հանգստութեան մինիստրութիւն կունենանք, և նոյնպէս ցանկանում ենք վերականգնել իշխանութեան սկզբունքը և խաղաղասիրութիւն մտցնել մտքերի մէջ։

12 յունիսի

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովի սօցիալիստական խմբի մէջ պառակտումն տեղի ունեցաւ՝ մինիստրութեան մէջ գեներալ Գալլիֆէի մտնելու պատճառով։ Այդ խմբից մօտ 15 մարդ նոր կուսակցութիւն կազմեցին։

ՄԱԴՐԻԴ։ Երէկ Գրէնադայի նահանգի երկու քաղաքներում ցոյցեր եղան շաքարի վրա հարկ դնելու դէմ։ Կարգը վերականգնված է։

ՊԱՐԻԶ։ Նոր մինիստրները դուսարվեցին այսօր Ելիսեան պալատում և առաջին նիստ ունեցան Լուբէի նախագահութեամբ։ Նրանք ընդհանուր գծերով մշակեցին մինիստրական դէկլարացիան, որը կը հաղորդվի սենատին և պատգամաւորների ժողովին երկուշաբթի։ Դէկլարացիայի վերջնական խմբագրութիւնը կը կազմվի նոր խորհրդի մէջ, որ տեղի կունենայ կիրակի առաւօտեան։ Նա կարճ կը լինի և ասված կը լինի նրա մէջ, որ մինիստրութիւնը կազմվեց գլխաւորապէս հանրապետական հիմնարկութիւնները պաշտպանելու նպատակով։ Վալդէկ-Ռուսսո հաղորդեց, որ երեկոյեան արդէն կը դիմի պրէֆէկտներին շրջաբերականով, որի մէջ ասված կը լինի, թէ նրանք պէտք է աշխատեն պահպանել ամենամեծ անկողմնապահութիւն քաղաքական հարցերում։ Գալլիֆէ հաղորդեց, որ շրջաբերականով կը դիմի գեներալներին, որի մէջ կառաջարկի յիշեցնել ամեն աստիճանի զինուորականներին՝ կարգապահութիւնը անպայման պահպանելու մասին։ Գալլիֆէի առաջարկութեամբ, խորհրդի մէջ վճռված է տեղափոխելու մի քանի բարձրաստիճան օֆիցէրներին, որոնք կարգապահութեան հակացողութեան հակառակ քայլեր արեցին։ Լէպլենին ոստիկանութեան պրէֆէկտ նշանակելու հրովարտակը, Բլանի տեղ, որը նշանակվում է պետական խորհրդի անդամ, առաջարկված է հանրապետութեան նախագահին ստորագրելու համար։

ՀՌՕՄ։ «Ստեֆանիի գործակալութիւնը հեռագրեց արքայական հրովարտակի ընդարձակ բովանդակութիւնը երէկվան թերթից, ինչպէս և դրան վերաբերվող զեկուցումը թագաւորին՝ քաղաքական ձեռնարկութիւնների մասին 1) ժողովների, 2) ընկերակցութիւնների, երկաթուղիների, պօստի, լուսաւորութեան գործին ծառայողների, գործադուլների և 4) մամուլի վերաբերմամբ։ Հրովարտակը պէտք է սկսի գործադրվել յուլիսի 20-ից և կառաջարկվի պարլամէնտին՝ օրէնքի ոյժ ստանալու համար։ Թագաւորին ներկայացրած զեկուցման մէջ ասված է, որ պարլամէնտին այդպիսով հնարաւորութիւն է տրվում հրովարտակի մէջ բերված միջոցները քննութեան ենթարկել մինչև նրանց գործադրութիւնը և իր վճիռը կայացնել։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Սէնտ-Միլօշի մօտ հանքերում փլվեց հորը, տակն անելով այնտեղ գտնվող բազմաթիւ բանւորներին։ Իսկոյն սկսվեցին նրանց ազատելու աշխատանքները։ Հանքահորում գտնվող բանւորների թիւը դեռ ևս չէ ստուգված։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Գերմանական դեսպան Գոլլէբէն երէկ այցելութիւն գործեց արտաքին գործերի մինիստրութեան մէջ։ Ցուլիսի կէսին նա արձակուրդով գնում է Բերլին։ Դրանից եզրակացնում են, որ յարաբերութիւնները Գերմանիայի և Միացեալ-Նահանգների մէջ լաւ են։

ՀԱԱԳԱ։ Խաղաղութեան կոնֆէրէնցիայի առաջին յանձնաժողովին ներկայացրած ռուսաց առաջարկութիւնների նպատակն է, որպէս զի այժմեան զինուորական ոյժերի չափը և նրանց բիւջէյը չը կարողանան մեծանալ 5 տարի շարունակ. միայն դաղթականական զօրքերը չեն ենթարկվում այդ սահմանափակման։ Երրորդ յանձնաժողովի խմբագրական յանձնաժողովը, որը զբաղված է միջնորդ դատարանի հարցով, այսօրվայ նիստի մէջ քննեց ռուսաց առաջարկութեան 1—7 յօդուածները՝ միջնորդ դատարանի կանոնների մասին։ Այդ առաջարկութիւնը բաղկացած է 26 յօդուածներից։ Զորեքշաբթի կոնֆէրէնցիան կը ցրվի, երևի կարճ ժամանակով՝ պատուիրակներին ժամանակ տալու զեկուցանելու համար իրանց կառավարութիւններին գործի ընթացքի մասին։

ՊԱՐԻԶ։ Պրէֆէկտներին Վալդէկ-Ռուսսոի ուղարկած շրջաբերականի մէջ ասված է, որ մինիստրութիւնը յանձն է առնում հանրապետութեան պաշտպանութեան գործը և այդ պատճառով հրամայագրում է զեկուցանել իրան այն ամեն վարմունքների մասին, որոնք շօշափում են յարգանքը դէպի հիմնարկութիւնները և հասարակական կարգը, նոյնպէս և, եթէ հարկը կը պահանջի, համապատասխան միջոցներ ձեռնարկել։

ՀԱԱԳԱ։ Միջնորդ դատարանի վերաբերեալ զբ-

բութիւնը բարձրացուց: Պատուիրակները սկսել են յուսադրվել, որովհետև Բերլինից ստացված տեղեկութիւնները ստիպում են հաւանաբանութեան սպասել:

ԿԻԼ: Ցունական արքայորդին և արքայադուստրը ժամանեցին. նրանց դիմաւորեցին կայսերական զոյգը և պրինց Հէնրիխի ամուսինը, որից յետոյ նոցա ժեռութիւնները և նոցա բարձրութիւնները գնացին «Հոֆհնցէլօրն» նաւը:

Կ. ՊՕԼԻՍ: Սուլթանը, սելամլիքից յետոյ, ընդունեց ռուսաց դեսպան Զինովիեվին:

ԲԵՐԼԻՆ: Զինտաուից հեռագրում են, որ Կաամլին հարեան զանազան գիւղերի ազգաբնակութիւնը քանդեց գերմանական ինժենէրների կառուցած երկաթուղիական շինութիւնները: Ցանցաւորներին պատժելու համար ուղարկված է ծովային բատալիոնի առաջին վաշտի հրամանատար Մաուվէ՝ 80 մարդ հետևակ զինուորներով և 16 ձիաւորներով:

ՊԱՐԻԶ: Գենեռալ Գալիֆէ դիմեց զօրաբաժինների հրամանատարներին մի շրջաբերականով, որտեղ ասում է. «Ցաւօք սրտի ես ստիպված եղայ հրաժարվել իմ առանձնութիւնից, որպէս զի յանձն առնեմ երկրի և հանրապետութեան կառավարութեան առաջ պատասխանատուութիւնը զօրքի համար: Դա ինձ համար մեծ պատիւ է և ամենևին երկիւղ չեմ կրում: Խնդրում եմ ձեզ չը մոռանալ, որ եթէ ես պատասխանատուութեան եմ ենթարկվում, դուք ես պատասխանատու էք իմ առաջ այն բաների համար, ինչ որ կատարվում է ձեր հրամանատարութեան տակ գտնվող զօրքի շրջանում: Ահա թէ ինչու ես յոյս եմ դնում ձեզ վրա, ինչպէս և դուք էլ կարող էք յոյս դնել ինձ վրա»:

Գենեռալ Լօժէ նշանակված է 28-դ հետևակ բրիգադայի հրամանատար, որը գտնվում է Բէլֆօրում:

13 յունիսի

Կ. ՊՕԼԻՍ: Սահմանի վրա տեղի ունեցած անցքի առիթով սերբական երէկվան յայտագրին Բ. Դուռը երէկ պատասխանեց յայտագրով, որի մէջ ասված է, թէ խառն յանձնաժողովը վկայեց, որ ընդհարման պատճառը սերբերն էին. ոչ նիզամները, ոչ ալբանցիները չեն խախտել սահմանը: Յայտագիրը նկատում է, որ սերբական բոլոր պահանջները քննված են, և հիմնաւոր դժգոհութիւններին ընթացք է տրված: Սակայն, գանգատների մեծ մասը անհիմն է, որպէս և անհիմն են մեղադրանքները կօսսովեան իշխանութիւնների դէմ:

ՊՐԱԳԱ: Վախճանվեց կարդինալ Շէնբօրն:

ՊԱՐԻԶ: Ընդհանուր պրօկուրօր Բէքարանին և հանրապետութեան պրօկուրօր Ֆիլիօլէին տրված են ուրիշ պաշտօններ: Գենեռալ Գարաշմիդտ փոխադրվում է Ռէյս, գնդապետ Սաքսէ-Պուատիէ: Քննութիւն է սկսված Կուբէրտէն գնդապետի գործի առիթով, որը փոխադրվում է ուրիշ զօրաբաժին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Այսօր, կէսօրից յետոյ մէկ ժամին, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա բարեյաջողութեամբ աղջիկ ծնեց, որի անունը դրվեց Մարիա:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Դ. ԳՈՒԲԿՈ—1½—2 ժ. ներքին և միաոեռական հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէկի, խիտ, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
139—151 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Սատարապօլեան Նահանգի Սուրբ Խաչ քաղաքի երեք հատ միդասեան և մի հատ երեքդասեան դպրոցների համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է

մի ճեմարանական, կամ թէ Ներսիսեան դպրանոցը աւարտած հայոց լեզուի, մի և նոյն ժամանակ և կրօնի ՈՒՍՈՒՑԻՉ, մօտաւորապէս ութն տարիւր բուրլի ռոճիկով: Ցանկացողները դասերի որոշման և պայմաններին մանրամասնօրէն տեղեկանալու համար, ներկայացնելով իրանց ուսուցչական վկայականը և արտօնութիւնը, կարող են դիմել տեղիս տնտեսական կառավարութեանը հետևեալ հասցէով՝ Въ городъ Святаго Креста Ставропольск. губерніи Святокрестовск. обществен. управленіе. (ե. հ. չ.) 1—3

Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի վարչութիւնը

Սրանով յայտարարում է, որ դպրոցում վերաքննութիւնները սկսվելու են օգոստոսի 26-ին, իսկ նորեկ աշակերտների քննութիւնները օգոստոսի 30-ին: Բ. և Գ. պատրաստականների և I դասարանի համար ընդունելութիւն չի լինի, տեղ չը լինելու պատճառով: 1—3

Կովկասի ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրադարան-ընթերցարանը

(Միջին փողոց, տ. Տէր-Աստուածատրովի, Ադելխանեանի մագազինի գլխին), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9: Ստացվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը: Մուտքը 2 կոպ., ամսով 40 կ. ուշակերտներից կէս վճար: 42—50

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1899 Թ. ԼՈՒՍ ԵՆ ՏԵՍԵԼ

	Ր.	Կ.
ՋԷՍՍԻԿԱՑԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՔԸ, թարգ. Պ. Գուշչանի	—	20
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆԳԼԻԱՑԻՆ, Հաուֆի. թարգմ. Շ. Տ.—Ն.	—	5
ՀՐԷԱՑ ԱՌՆԷՐԸ, Հաուֆի. թարգմ. Շ. Տ.—Ն.	—	3
ՍԷԲԷՈՍԻ ՊԱՏՄ. և Մ. Խորենացի, Սա. Մալխասեանցի	—	40

Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ. կամ Tiflis, (Russie), Société de la publication des livres Arméniens. 10—10

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ռուսերէնի հմուտ մի պարոն, օրական մի ժամ ռուսերէնից պարապելու համար: Մանրամասնութիւնների և պայմանների մասին դիմել 2-րդ էժանագին գրադարանը, Вельяминовская ул. 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՓՈՂՈՎԱՐԱՆԸ

հրաւիրում է ցանկացողներին կապալով վերցնել ժողովարանի խոհանոցի և բուֆէտի պահելը: Մանրամասն տեղեկութիւններ կարելի է ստանալ ժողովարանի գրասենեակում ամեն օր, երեկոյեան 9 ժամից մինչև 12-ը: (9—12—15) 3—3

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ

Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը:
Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31: (ե. հ. չ.) 42—100

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայումս կոմս Լօրիս-Մելիքովի թոշակներից մէկը ազատ է: Կանոնադրութեան համաձայն այդ թոշակով կարող են օգտվել համալսարանների այն ուսանողները, որոնք լաւ աւարտել են իրանց ուսումը Թիֆլիսի գիմնազիաներից մէկում և մի և նոյն ժամանակ բուն Թիֆլիսցի են: Ցանկացողները պէտք է իրանց խնդիրքները, հարկաւոր օգնականների հետ, ներկայացնեն մինչև 1899 թվի օգոստոսի 1-ը: (14) 3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թողտուութեամբ

ՊՐՕՖԻԶՕՐ ԹԻԽԻՆՕՎԻ

Պատրաստած նոր սննդարար խմիչք

Տ. Ժ. ՍՈՒՐՄԷ

Ծախվում են հետևեալ տեղերում: Թիֆլիսում՝ դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մօտ, Օտէլնի, Մակկէբի և Եակօբովիչի դեղատներում. Օֆիցեր. Էքոնոմիչ. մագազինում ու «Общества потребителей З. Ж. Д.»-ի խանութում, Ակոպովի և Դուրգեովի խանութներում, Ա-վալովի խանութում (Միջին փողոց): Գանձակում՝ Սուքեասովի, Վերզիեվի ու Ներսիսեանի խանութներում: Գորի՝ Բագիրովի դեղատան մէջ: Ալէքսանդրոպոլ՝ Ալէքսանդրովի և Սէյլանեանցի խանութներում, նաև Ռուսաստանի բոլոր յայտնի խանութներում: (ռ. և. հ.) 2—3

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱԳՈՒ

ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ

Սկսել է իր գործունէութիւնը,

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոգէկթիռների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն: Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարկաւոր գործիքներ:

Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի-Հէյբաթում:

Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տելէֆոն № 749), գործարան. տելէֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տելէֆոն № 451. (ե. հ. չ)

ՀԱՅԹԱՅԹՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱԼԱՏԻ

1845. 1865. 1882. 1896.

Ա. ՐԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱ.

ՕԾԱՆԵԼԻՔ

ՐՕԵԱԼ-ՐԱԼԼԷ

Հոտաւէտ ջրեր, սապօն և պուդրա

ԾԱՂԿԱՅԻՆ ՕԾԱՆԵԼԻՔ

ՀՈՏԱՒԷՏ ՋՐԵՐ, ՍԱՊՕՆ և ՊՈՒԴՐԱ 6 հոտով.
Շուշան, եասաման, բեղէդա, վիօլէտ, պաչուլի, գելիօտրօպ.
3 ԱՌԱՐԿԱՑԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԱՐԿՂԸ 2 ՐՈՒԲԼԻ:
МОСКВА, 1) Пассажъ Солодовникова. 2) Тверская, д. Спиридонова.
С.-ПЕТЕРБУРГЪ, Невскій, 18.
Նաև Ռուսաստանի յայտնի դեղատներում:
Ф.Ф.НИКОЛЬСКІЙ, МОСКВА

(3)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 23 յունիսի 5 յուլիսի ՄԻՆԳՐԵԼԻԱ շոգենաւը, նաւապետ ՇԵԼՏ: Եւ այսուհետև՝ չորեքշաբթի, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօլֆ, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Թօշափարուխովի և Մայսուրաձէ քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին Կօլուբիակինսկայա հրապարակ: ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելիքոր Հերշենզոնին: (ե. հ. չ.) 6—20

БЕРНДОРФСКІЙ МЕТАЛЛИЧЕСКІЙ ЗАВОДЪ

АРТУРЪ КРУППЪ.

ART. KRUPP BERNDORF

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒԶՆԵՑԿԻ ԿԱՄՈՒՋԻ ՎՐԱ

Առաջարկում է հիւրանոցներին և անտեսութիւններին իր գործիքները

ՄԻԱՁՈՅԼ ՄԵՏԱՂԻՑ „ԱԼՊԱԿԱ"

Սպիտակ արծաթագոյն, բնական ձևով և ծածկված մաքուր արծաթի թանձր շերտով, նմանապէս ԹՈՂԱՆՈՑԻ ԱՄԱՆԵՂԷՆ, ՄԱՔՈՒՐ ՆԻԿԵԼԻՑ

6—10

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Іюня 1899 г.
Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбеліановская ул., № 27.